Գերմանական Բունդեսթագի ՔԴՄ/ՔՍՄ խմբակցության խորհրդարանական քարտուղար, Բունդեսթագի անդամ Մանֆրեդ Գրունդի ելույթը Գերմանական Բունդեսթագի 2019 թ. ապրիլի 4-ի նիստի օրակարգի 10-րդ կետի քննարկման ժամանակ՝ հետևյալ հարցի շուրջ.

«Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրված համաձայնագրի առնչությամբ Դաշնային կառավարության ներկայացրած օրենքի նախագծի քննարկում և եզրափակիչ քվեարկություն»

Կա երկու բան, որ ինքներս չենք կարող ընտրել.
- ընտանիքում՝ քույր-եղբայրներին, ինչպես և «Մեծ եղբորը»
- և, որպես պետություններ՝ մեր հարևաններին. վերջիններիս նույնպես չես կարող ընտրել:

Ահա հենց այդ մասին եմ ուզում խոսել:

Մեծարգո տիկնա՛յք և պարոնա՛յք,
պարոն նախագա՛հ.

1991 թվականին Երկաթյա վարագույրի անկումով Եվրոպայի արևելքում ու հարավարևելքում տեղի ունեցան խորը քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Նախկին խորհրդային արբանյակ-պետություններից շատերն այս ընթացքում դարձել են Եվրոպական Միության անդամ: Այլ կերպ ասած. եվրոպական պետությունների համայնք՝ եվրոպական ընտանիք, են վերադարձել ժողովուրդներ ու պետություններ, որոնք հարյուրամյակներ ի վեր եղել են եվրոպական մշակութատարածքի մաս: Ոչ միայն Վարշավան, Ռիգան ու Բուխարեստն են եվրոպական կենտրոններ, այլ նաև Մոսկվան, Կիևն ու Երևանը: Այս քաղաքները Եվրոպայի մաս են: Այդ երկրները ոչ թե Եվրոպայի հարևաններն են, այլ Եվրոպայում մեր հարևանները:

Նաև այս պատճառով չի կարող լինել Եվրամիություն-Եվրոպայի սահմանների հարցի վերաբերյալ վերջնական, բացառիչ պատասխան: Այդ Եվրոպան բաց նախագիծ է, բայց՝ արժեքներով ու սկզբունքներով, և ոչ միայն սեփական քաղաքացիների, այլ նաև հարևան պետությունների և այնտեղ ապրող մարդկանց համար առանձնահատուկ պատասխանատվությամբ:

Ահա արդեն տասը տարուց ի վեր Արևելյան Եվրոպայի վեց պետություն՝ Ուկրաինան, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Բելառուսը, Ադրբեջանը և Հայաստանը, Արևելյան գործընկերության քաղաքականության շնորհիվ մերձենում են Եվրամիությանը: Բայց Եվրամիության համար Արևելյան գործընկերության այդ երկրների առումով անդամակցության հարց չի դրվում: Մենք չենք ուզում տալ կեղծ հույսեր, որոնք հետագայում չեն կարող իրականացվել: Պետք է նաև հստակորեն

ամրագրել, որ Արևելյան գործընկերության ծրագիրն ուղղված չէ որևէ մեկի և, ինչը շատ կարևոր է, նաև Ռուսաստանի դեմ:

Հարևանության քաղաքականության նպատակը Եվրամիության շուրջը նմանակերպ զարգացումային մոդելի, այսինքն՝ իրավական պետականությանը, շուկայական տնտեսությանը և ժողովրդավարությանը կողմնորոշված բարեկամական պետությունների օղակ ստեղծելն է: Դրանով մենք առաջին հերթին կամենում ենք մեր սահմաններին ապահովել տնտեսական զարգացում, կայունություն և անվտանգություն, ինչը նշանակում է, որ Հարևանության քաղաքականությունն ավելին է, քան ազատ առևտուրն ու տնտեսական ինտեգրումը: Քանզի, և ցավոք, այս երկրներում զարգացումը տասնամյակներ շարունակ լճացում է ապրում: Եվ, ինչն ավելի ծանր է, այդ երկրները կորցնում են իրենց ապագան, քանի որ երիտասարդ, լավ կրթություն ստացած մարդիկ շարունակ ավելի մեծ թվով լքում են այդ երկրները:

Արևելյան գործընկերության երկրների շուրջ 70 միլիոն բնակչությունը Եվրամիությանը մերձեցման հետ կապում է ազատության, խաղաղության և անվտանգության մեջ ապրելու և զարգացման հեռանկար ունենալու հնարավորությունը: Բայց դա կհաջողվի միայն այն դեպքում, եթե մենք նրանց առջև բացենք եվրոպական ինտեգրացիոն գործընթացներ տանող ճանապարհը և խորացնենք եվրոպական մակարդակում գոյություն ունեցող համագործակցության ձևերը:

Ընդ որում, Եվրամիությանը մերձեցումն Արևելյան գործընկերության պետությունների համար ամենևին անայլընտրանք չէ: Ընդհակառակը, բոլոր վեց պետությունները փնտրում են իրենց հասարակություններին և արդիականացման կարիք ունեցող տնտեսություններին համապատասխանող զարգացումային մոդելներ: Ոմանց համար առաջնահերթություն է ռուսական գերիշխանություն ունեցող Եվրասիական տնտեսական միությանը, մյուսների համար՝ Եվրամիությանն ինտեգրվելը: Մենք պաշտպանում ենք պետությունների ինքնիշխան իրավունքը՝ ինքնուրույն որոշելու, թե իրենք որ ինտեգրատարածքի մաս են ուզում լինել:

Քանզի, հարգարժան տիկնա՛յք և պարոնա՛յք, եթե փոքր երկրները հարկադրված են որոշում կայացնել իրենց մեծ հարևանների միջև, ապա նրանք իրականում կարող են կորցնել: Դա այդպես է հատկապես այն դեպքում, երբ արդիականացման օրակարգին փոխարինելու է գալիս աշխարհաքաղաքական մրցակցությունը: Բայց հենց դա վերաբերում է այն որոշմանը, որ 2013 թվականին Հայաստանը պետք է ընդուներ:

Այն ժամանակ Հայաստանի հետ բանակցված ասոցացման և ազատ առևտրի համաձայնագիրը չստորագրվեց, երբ Հայաստանի այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանը մոսկովյան իր այցից և Պուտինի հետ զրույցից հետո հայտարարեց, որ Հայաստանը մտադիր է առաջիկայում անդամակցել ռուսական գերիշխանություն ունեցող Մաքսային միությանը: Իր որոշումը նա հիմնավորեց տարածաշրջանային անվտանգության իրավիճակով և Հայաստանի կայունությամբ:

Դա մենք պետք է հարգենք: Մեզ համար ևս վճռորոշ նշանակություն ունեն այդ տարածաշրջանում անվտանգությունն ու կայությունը, քանի որ 1990-ական թվականների սկզբից ի վեր թուրք-ադրբեջանական տնտեսական շրջափակումը, 2009

թվականին հայ-թուրքական հաշտեցման ձախողված փորձը և միջազգայնորեն չճանաչված Լեռնային Ղարաբաղի / Արցախի Հանրապետության շուրջ մարմրող հակամարտությունը մեծ խոչընդոտ են տարածաշրջանում արդյունավետ համագործակցության համար:

Սակայն Թուրքիայի և Ադրբեջանի միջև այդ աշխարհաքաղաքական շրջափակումից ելքեր գտնելու համար Հայաստանին Եվրամիությունը նույնքան անհրաժեշտ է, որքան Ռուսաստանը: Եվ Հայաստանը, չնայած Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն, նախկինի պես շահագրգռված լինելով Եվրամիության հետ խորացված համագործակցությամբ, սկսեց նոր բանակցություններ, որոնք ավարտվեցին համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) ստորագրմամբ: Այդ համաձայնագիրը խիստ ընդգրկուն մի փաստաթուղթ է: Այն հիմնական մասերում նմանվում է մինչ այդ բանակցված Ասոցացման համաձայնագրին, բացառությամբ ազատ առևտրի գոտու, որը Եվրասիական տնտեսական միությանը (Մաքսային միությանը) Հայաստանի անդամակցության պատճառով այլևս հնարավոր չէ: Այդուհանդերձ, առևտրի և ներդրումների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով նախատեսվում է Եվրամիության նորմերի և կարգավորումների համակարգին առավել համապատասխանեցման գործընթաց:

Մեծ հետաքրքրությամբ մենք հետևում էինք, թե ինչպես է Հայաստանի արտաքին քաղաքական գիծը զարգանում 2018 թվականի ապրիլ-մայիսյան խորը քաղաքական փոփոխություններից հետո: Իմ գործընկեր Ֆոլքեր Ուլրիխը դրանց առավել մանրամասն կանդրադառնա: Այդտեղ լավն այն է, որ Հայաստանը շարունակում է հետամուտ լինել իր արտաքին քաղաքական առաջնահերթություններին և մնում է նաև Եվրամիության հետ համագործակցության մեջ: Հատկապես տնտեսական տեսանկյունից լավ կլիներ, եթե Հայաստանի կառավարությունը մշակեր Եվրամիության օգնությամբ իր տնտեսությունն արդիականացնելու ռազմավարություններ, քանի որ Եվրասիական տնտեսական միությունում անդամությունը մինչ այժմ չի բովանդակում դրան ուղղված բավարար հեռանկարներ:

Տիկնա՛յք և պարոնա՛յք.

Երևանի և Բրյուսելի միջև կնքված Գործընկերության համաձայնագրի հաջող իրականացման պարագայում Հայաստանը կարող է օրինակ ծառայել, թե ինչպես Եվրասիական տնտեսական միությունում անդամությունը *և* Եվրամիության հարևանության նախագծերին մասնակցությունը կարող են բերվել համագործակցային հարաբերության: *Մենք* շահագրգռված ենք բարեփոխումներում և սերտ համագործակցության մեջ ոչ միայն մեր արևելյան հարևան պետությունների հետ, այլ նաև մեր հարևանների հարևանների հետ: Հայաստանի հետ կնքված համաձայնագրի հաջող իրականացումը կարող է ազդեցություն ունենալ նույնիսկ երկրի սահմաններից այն կողմ:

Քանզի վեց գործընկեր պետություններին մեր մեկնած ձեռքը մեկնված է նաև Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի (միջինասիական.- ծանոթ. թարգմանչի) հինգ պետությունների ուղղությամբ: Մեր հարևանների և միաժամանակ Ռուսաստանի հետ

մենք պատասխանատվություն ենք կրում մեր աշխարհամասում խաղաղության, կայունության և բարեկեցության համար: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես, մի կողմից, Եվրասիական տնտեսական միության *և*, մյուս կողմից, Եվրամիության Արևելյան գործընկերության անդամ, այսպիսով, կարող է լինել այդ երկու տնտեսական բլոկների մերձեցման գործում հնարավոր համագործակցության տարր և զբաղվել ամբողջ Եվրասիայի համար համատեղելի տնտեսական շրջանակի հետ կապված հարցերով՝ Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ, մեր համատեղ եվրոպական տանը:

Տիկնա՛յք և պարոնա՛յք.

Այսկերպ կարելի է ստեղծել մի մթնոլորտ, որը հնարավորություն կտա ապագայում քննարկել նաև *այլ* նրբին անվտանգային հարցեր և գտնել համատեղ լուծումներ: Վերադառնամ ելույթիս սկզբին: Եթե մարդ չի կարող ընտրել իր քույր-եղբայրներին և իր հարևաններին, ապա պետք է ամեն բան անի հանուն բարելավ համակեցության: Եվ այս համաձայնագիրը պետք է նպաստի դրան:

Շնորհակալությու՛ն ուշադրության համար: